

**ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵԱՏՄ ԱՏԳ ԱՎ 8545 11 002 0
ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ 520 ՄՄ-ԻՑ ԱՎԵԼԻ, ԲԱՅՑ ՈՉ
ԱՎԵԼԻ, ՔԱՆ 650 ՄՄ ՏՐԱՄԱԳԾՈՎ ՇՐՋԱՆԱԶԵՎ
ԼԱՅՆԱԿԱՆ ՀԱՏՈՒՅԹՈՎ ԿԱՄ ԱՅԼ ԼԱՅՆԱԿԱՆ
ՀԱՏՈՒՅԹՈՎ 2700 ՍՄ²-ԻՑ ԱՎԵԼԻ, ԲԱՅՑ ՈՉ ԱՎԵԼԻ,
ՔԱՆ 3300 ՍՄ² ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱՖԻՏԱՑՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՂՆԵՐԻ՝
ԱՌԱՆՑ ՀԱԿԱԳՆԱԳՑՄԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2026 թվականի??? N -Ն

**ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵԱՏՄ
ԱՏԳ ԱՎ 8545 11 002 0 ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ 520 ՄՄ-ԻՑ ԱՎԵԼԻ, ԲԱՅՑ ՈՉ
ԱՎԵԼԻ, ՔԱՆ 650 ՄՄ ՏՐԱՄԱԳԾՈՎ ՇՐՋԱՆԱԶԵՎ ԼԱՅՆԱԿԱՆ ՀԱՏՈՒՅԹՈՎ ԿԱՄ
ԱՅԼ ԼԱՅՆԱԿԱՆ ՀԱՏՈՒՅԹՈՎ 2700 ՍՄ²-ԻՑ ԱՎԵԼԻ, ԲԱՅՑ ՈՉ ԱՎԵԼԻ, ՔԱՆ 3300
ՍՄ² ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱՖԻՏԱՑՎԱԾ
ԷԼԵԿՏՐՈՂՆԵՐԻ՝ ԱՌԱՆՑ ՀԱԿԱԳՆԱԳՑՄԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 338-րդ հոդվածի
6-րդ մասով և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի 2025
թվականի դեկտեմբերի 16-ի № 101 որոշման 1² և 1³-րդ կետերի դրույթներով
Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1? Սահմանել, որ

ա) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2025 թվականի
նոյեմբերի 17-ի № 101 որոշման (այսուհետ՝ Որոշում) 1³ կետով նախատեսված՝
հակազնազցման տուրքի վճարումից ազատվում են Հայաստանի
Հանրապետության տարածք ներմուծվող Չինաստանի ժողովրդական

Հանրապետության ծագում ունեցող և ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8545 11 002 0 ծածկագրին դասվող 520 մմ-ից ավելի, բայց ոչ ավելի, քան 650 մմ տրամագծով շրջանաձև լայնական հատույթով կամ այլ լայնական հատույթով 2700 սմ²-ից ավելի, բայց ոչ ավելի, քան 3300 սմ² մակերեսով վառարաններում օգտագործվող գրաֆիտացված էլեկտրոդները՝ տարեկան 700 տոննա ծավալով:

բ) Որոշման 1²-րդ կետով նախատեսված՝ հակազնագցման տուրքը չի գանձվում Liaoning Dantan New Materials Co., Ltd.-ի կողմից արտադրված գրաֆիտացված էլեկտրոդների նկատմամբ, եթե հայտատուն ապրանքների մասին հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ ունի համապատասխան արտադրողի լիազորված, աշխատակցի կողմից ստորագրված և այդ արտադրողի կնիքով հաստատված՝ արտադրողի հավաստագրի ձևը՝ համաձայն Որոշման 1¹-րդ հավելվածի, և ապրանքների մասին հայտարարագրում այդպիսի հավաստագրի մասին տեղեկություններ ներկայացնելու դեպքում:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը լիազոր մարմին՝ Որոշման կիրարկման իմաստով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված ապրանքների՝ առանց հակազնագցման տուրքի վճարման «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 10-ի № 228-Ն որոշման համաձայն տրամադրված եզրակացության հիման վրա՝ եզրակացության մեջ նշված քանակներով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, գործում է 5 տարի ժամկետով և դրա գործողությունը տարածվում է 2026 թվականի հունվարի 18-ից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով գրանցված մաքսային հայտարարագրերի նկատմամբ:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ն. Փաշինյան